

## ԵՐԿՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ

(Die Teilung der Erde)

Շ Ի Լ Լ Ե Ր Ի

— «Առէք երկիրն», ասաց Ջևար երկրնքից,  
ի լուր մարդկանց. «ասէք, ձերն է այս աշխարհ!  
Ժառանգութիւն թողնում եմ ձեզ այս օրից.  
Բաժանեցէք եղբայրաբար և արդար»:

—  
Ով ձեռք ունէր, վազեց դէպի իր բաժին.  
Մանուկ ու ծեր, դէ՛, առաջ են ըշտապում.  
Մըշակն առաւ պըտուղները դաշտային.  
Մեծատունը գընաց որսալ անտառում:

—  
Վաճառականը լըցնում է ամբարներ,  
Կրօնաւորը ընտրում է հին, թունդ գլինին.  
Արքան փակում հրապարակներ, կամուրջներ  
եւ յայտնում է. «Տասանորդը իմ բաժին»:

—  
Ամենքից ուշ, երբ բաժանուած էր աշխարհ,  
Հեռու տեղից եկաւ պոյէտն անաղան.  
Բայց ոչ մի տեղ, աւանդ, ոչինչ էլ չը կար.  
Եւ ամեն ինչ ունէր տէր ու տիրական:

—  
«Վայ ինձ, մի՞թէ բոլոր մարդկանց մէջ միայն  
Մոռացուած եմ ես, սիրեցեալ քո որդին»,  
Կողկողագին խօսեց պոյէտն ողբաձայն  
եւ հըրաժեշտ տըւեց Ջևարի գահոյքին:

— «Մինչ երազով տարուած էիր դու երկրում»,  
 Խօսեց Աստուած. «էլ մի վիճիր դու ինձ հետ,  
 Ո՛ւր էիր դու, երբ աշխարհն էր բաժանուում»  
 «Քեզ մօտ էի», պատասխանում է պոյէտ:

—  
 «Իմ հայեացքը դէմքիդ էի բևեռած,  
 Լըսում էի դաշն հընչիւններ երկընքի.  
 Ներիր, որ քո մաքուր լուսով հրապուրուած՝  
 Աշխարհային բարիքները կորցըրի:»

— «Փոյթ չէ, ասաց Ձևը ազնիւ պոյէտին.  
 էլ իմը չեն աշուն, և որս, և շուկան.  
 Բայց թէ կուզես ապրել ինձ հետ միասին,—  
 Երկինքը բաց է քո առջև ամեն ժամ:»

Լ. Մանուէլեան